




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2759

եր բոլոր յերկրներէ, միացեք.

ՀԱԴՈՒՆՑ

ԼԵՆԻՆԸ

ՅԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԸ

311 26

6 - 12

Յ Ե Դ Ե Վ Ա Յ
1925

12 JUL 2013

3K316 12239
612 24724
Zugunzug

[illegible]

300
1529-24

08 JUN 2005

20 NOV 2009



ԼԵՆԻՆԸ 364 ՀԱՅԱՍՏԱՆԸ

ԼԵՆԻՆԻ ՆԱԽԱԿԸ ԱՌԲԵԶԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ,
ԴԱՂՍՏԱՆԻ ՅԵՎ ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԿ. ԿՈՐՈՒՆԻՍՏԱՆԵՐԻՆ

19239

600

2759



Գրանկ. 1724 Տրեստի Առաջին աղաբան. Գառ. 1806
Տերած—1500 որինակ

ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ՀԱՅՍՍԱՏՈՒՆԸ

(Մահական օտեղիցի առթիվ)

Կոմունիստական կուսակցության կրեմլ մոտը գործելու որից ընկեր ԼԵՆԻՆԸ համարյա առանց մեկնելու ապրում եր այնտեղ: Առորյա, ինչպես նաև կուսակցական, խորհրդային ու արհեստակցական աշխատանքների անմիջական ղեկավարությունը, թվում եր, թե նրան իր պերժեբրիայից պիտի կտրեյին:

Այդպես կլինեիր ամեն մեկը, սակայն բնավ յերբեք ԼԵՆԻՆԸ: Նա գիտեր բանվորական շարժման պատմությունը, առավել ևս ռուսական բանվորական շարժման պատմությունը: Նա ռուսական պրոլետարիատի մարմնացումն եր, ու այդ պատճառով ել նրա համար դժվար չեր կրեմլում նստած ղեկավարել բոլոր աշխատանքները, տեսնել յուրաքանչյուր խրճիթի կյանքը, լսել զորանոցներում ապրող ու ճակատներում գտնվող կարմիր Բանակայինների զրույցները, գուշակել գործարաններում աշխատող բանվորների մտքերն ու այդ բոլորից յեզրակացություններ հանգելով՝ հերթական լոզունգներ տալ:

Նա այդպես եր, սակայն վոչ միայն ռուսական բանվորական զասակարգի համար: Ճիշտ

ե, ԼԵՆԻՆԻ անունը կապված է ռուսական հեղափոխութեան, ռուսական բանվորական շարժման հետ, բայց նրա խորը միջազգային ուսմունքը նրան դարձնում է համաշխարհային Ղեկավար-Ուսուցիչ: Այդպիսին երևալ է այդպիսին ել նա կմնա նաև ճնշված ազգութիւնների համար:

Նա, քան վորեւէ մեկ ուրիշն, ավելի լավ երևանկանում հնդիկին, չինացուն, տաճիկ գյուղացուն, անգլիական գարշապարի տակ հեծող պարսիկին, իսկ ամենից լավ նա գիտեր ու հասկանում էր ցարական Ռուսաստանի գարշապարի տակ գտնված ազգութիւնների կյանքը: Ընկեր ԼԵՆԻՆԸ Ռ. Կ. Կ. լավագույն ռադիկալ ընդունողն էր: Ազգութիւնների կյանքի ուսումնասիրութիւնն ստեղծեց Ռ. Կ. Կ. ազգային քաղաքականութիւնը, վորը խորապես զանազանվում է մյուս կուսակցութիւնների ազգային քաղաքականութիւնից:

Սակայն ընկ. ԼԵՆԻՆԸ միայն սրանով չէ մեծ. նրա մեծութիւնը նաև այն էր, վոր նա ընդհանուր ֆորմուլաներ առաջադրելով չէր բավականանում միայն, այլ և նրանց կոնկրետացնում և կիրառման յեղանակներն ու ժամանակը մտանանշում:

Հայաստանը, վոր առանձնապես չի կարող պարծենալ իր պրոլետարիատի բազմութեամբ և

անցյալի հեղափոխական շարժումների մեջ իր ունեցած մասնակցութեամբ, — ուստի հեղափոխութեան մեջ աչքի ընկնող ղեկավարներիք շատ քչերն են, վոր նրան ճանաչում են: Ընկ. ԼԵՆԻՆԸ Հայաստանից շատ հեռու գտնվելով՝ ճանաչում էր նրան ու զրա համար էլ Հայաստանի խորհրդայնացման հենց առաջին որն իսկ նա անհրաժեշտ համարեց ցուցմուքներ առնել նրան: Յերբ Հայաստանի բանվորներն ու գյուղացիներն իշխանութիւնն իրենց ձեռքը վերցրին, Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը վոչ միայն ղեկավարվում էր ընկ. ԼԵՆԻՆԻ ուսմունքով այլև անմիջականորեն ղեկավարվում էր նրանով, պրոլետարատի առաջնորդ ընկ. ԼԵՆԻՆՈՎ:

Հայաստանի խորհրդայնացման առաջին որն իսկ Հայաստանի Հեղկոմին հղած վողջույնի հեռագրով ընկ. ԼԵՆԻՆԸ հանձնարարում է վոչ միայն իր յերկրում, այլև նրա սահմաններից դուրս չշարունակել դաշնակցութեան քաղաքականութիւնը: Նա ուժեղ խորհուրդ է տալիս վերջ դնել իր հարեանի՝ բեմալական թյուրքիայի դեմ ունեցած անվերջ կռիվներին և հաշտվել նրա հետ, վորն այդ ժամանակ հեղափոխական պայքար էր մղում ոտարյերկրյա խնամակալութիւնից ազատվելու համար: Հաշտութիւնը՝ հայ գյուղացու փրկութիւնն էր:

Իմպերիալիստական պաշտերազմը Հայաս-

տանի նկատմամբ ավելի քան անողորմ և անխնայանդիսացավ։ Թերեւս վոչ մի ազգայնական կուսակցութիւն այնպէս չի կործանել ու այնպէս չի վոչնչացրել իր ազգի յայդապիւններին ու բանավորներին, վորոնց անունից նա խոսում եւ ինչպէս դաշնակցութիւնը։ Իրականացնելով մեծ պետութիւնների «Հայաստանի ազատութեան» լուծունգը, սակայն իրականացնելով այնպէս, վոր յերկրում մի հատիկ հայ չմնա, — դաշնակցութիւնը դեպի թուրք ժողովուրդը սերմանում եր անասնական ատելութիւն վորն հայ ժողովուրդը մասսայորեն վոչ մի ատելութիւն չեր տածում։ Սրան պիտի վերջ տրվեր, վորովհետեւ դրանից հետո, խաղաղութիւն հաստատելուց հետո միայն հնարավոր եր ավերված յերկրի տնտեսական կյանքի վերակազմմանը ձեռնարկել։ Ընկ. Լենինը զիտեր, վոր Հայաստանը կարոտ ե խաղաղութեան, վորն և յերկրի խորհրդայնացման առաջին ուրն իսկ՝ գյուղական մասսաների թախանձանոք՝ կնքվեց։

Սակայն դաշնակցականների վարած քաղաքականութեան հետեանքով ուժասպառ յեղած Հայաստանը միայն Թիւրքիայի դեմ չեր՝ վոր պատերազմում եր։ Գործելով անգլիական ժանդարմերիալի ցուցմունքներով, «դաշնակցութիւնը» ինչպէս իր «հանրապետութեան» ներսում, նույնպէս և նրա սահմաններից դուրս՝ ազգերին միմիանց

զեմ եր լարում։ Ազգամիջյան սպանդանոցները վերջ չունեցին։ Կոտորածները Հայաստանում, կռիւները Հայաստանի և Վրաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ, դաշնակցականների և մուսաֆաթիստների կազմակերպած կոտորածներն Ադրբեջանում, — այս բոլորն այդ ազգութիւնների մեջ ստեղծել էին մի անակարագրելի անտագոնիզմ։ Այս բոլորն հետեւում եր համաշխարհային հեղափոխութեան դեկավար ընկ. Լենինը, և Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի, Դաղստանի և Լեռնականների Հանրապետութիւնների կոմունիստներին ուղղած իր 1921 թ. ապրիլի 14-ի նամակում, — վորը Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան աշխատանքների հիմնական ծրագիրը հանդիսացավ, — գրում ե. — «Ձերմ վողջունում եմ Կովկասի Խորհրդային Հանրապետութիւններին և Թուրքիային ինձ հուսալու, վոր նրանց սերտ միութիւնը կստեղծի ազգային համերաշխութեան մի այնպիսի որինակ, վորպիսին տեսնված չեր և չեր ել կարող լինել բուրժուական հասարակարգում»։

Ազգային համերաշխութիւն, — ահա ինչ ե խորհուրդ տալիս մեզ ստեղծել ընկ. Լենինը։ Սակայն համերաշխութիւն վոչ լոկ խոսքերով, վորպիսիք կնքվում էին նաև դաշնակցականների, մենշեվիկների ու մուսաֆաթիստների

ժամանակ, լույս անտեսանելի ու անհնարին բուր-
ժուական համերաշխություն, այլ մի այնպիսի
խաղաղություն ու համերաշխություն, վորին
անձկությամբ ու անհամբերությամբ սպասում
էր հայ գյուղացիությունը: Յեւ Սորհրդային
Հայաստանը կարող է պարծենալ, վոր ընկ.
Լենինի այդ պատգամն իրականացած է: Սոր-
հրդային Իշխանության գոյության այս ամբողջ
ժամանակամիջոցում վնչ Հանրապետության
մեջ և վնչ ել նրա սահմանների վրա՝ չի
յեղել հասարակ սպանության մի դեպք ան-
գամ:

Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերա-
տիվ Սորհրդային Հանրապետությունների սերտ
բարեկամությունն ու միությունը, բուրժուա-
կան հասարակակարգում չտեսնված ու չեղած
ազգային համերաշխության մի որինակ է: Սա-
կայն ընկ. Լենինի համար միանգամայն պարզ
էր, վոր միայն խաղաղություն և համերաշխու-
թյուն հաստատելով իշխանություն չի կարելի
պահել: Անհրաժեշտ է իշխանությունն ամրապնդել
և յերկրի տնտեսական հնարավորությունները
զարգացնել: Ու դրա համար ել, ի նկատի ունե-
նալով այն հանգամանքը, վոր մեր յերկիրն ա-
վելի յե գյուղացիական, քան Ռուսաստանը, —
նա առաջարկում է չընդորինակել ռուսական
տակտիկան, այլ՝ «խոհուն կերպով՝ տեղական

կոնկրետ պայմանների համեմատ փոփոխու-
թյան յենթարկել այն»:

Սրանով ընկ. Լենինը Հայաստանի Կոմու-
նիստական Կուսակցությանը նախազգուշացնում
էր խուսափել նրանից, — զինվորական կոմունիզ-
մից, — ինչ վոր անխուսափելի յե յեղել Ռու-
սաստանի համար: «Ավելի դանդաղ, ավելի ըզ-
գուշ, ավելի սխտեմատիկ անցումն դեպի սո-
ցիալիզմը» — ահա թե ինչ է հանձնարարումը ընկ.
Լենինին: Սա նշանակում է հրաժարվել չքավո-
րության կոմիտեների քաղաքականությունից,
բուրժուազիային եքսպրոպրացիայի յենթարկելու
շաբաթներից և այլն, վորպիսիք անհրաժեշտ են
յեղել Ռուսաստանում՝ նրա քաղաքական տո-
կունությամբ և հեղափոխական անցյալով հա-
րուստ ռուս պրոլետարիատով: Այդ անհնարին
էր կիրարկել գյուղացիական հետաձնաց, ավե-
լին՝ ավերված, անվերջ պատերազմների հետե-
վանքով տանջված մի յերկրում: «Ավելի մեղմ,
զգուշ և զիջող վերաբերմունք ունենալ դեպի
մանր բուրժուազիան, ինտելիգենցիան և հատ-
կապես դեպի գյուղացիությունը»: Այստեղ
պետք էր սկսել Նոր Տնտեսական Քաղաքակա-
նությունից: Չպետք էր վախենալ թե՛ Նեղի
հետևանքով վերածնվող մանր բուրժուազիա-
յին դաշնակցությունը կարող էր ոգտագործել:
Հենվել իր սեփական ուժերի վրա նա չէր կա-

բող, այդպիսիք չունենալու պատճառով, իսկ Անտանտայի ոգնութիւնը հուսալ նա նուիրւալիս չեր կարող. վորովհետեւ ռուսական պրոլետարիատի հասցրած հակահարձակն այնքան եր ուժեղ ու զգալի, վոր հաղիվ թե Անտանտան նորից համաձայներ խորհրդային իշխանութեան դեմ վորեւ մեկին զինվորական աջակցութիւն ցույց տալ: Իսկ այդ ժամանակամիջոցում Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. մեջ աճում և կազմակերպվում եր կարմիր Բանակը, վորը պատրաստ եր յերիտասարդ խորհրդային Հայաստանի առաջին իսկ կանչին՝ նրան զինվորական ոգնութիւն ցույց տալ: Դրա մեջ ել հենց ընկ Լենինը տեսնում եր Ռ. Ս. Ֆ. Ս. Հ.,—վորը վոչ մի տեղից ոգնութիւն չեր ստանում,— և խորհրդային Հայաստանի դրութեան ելական տարբերութիւնը: Իսկ այս հանգամանքը նրան հնարավորութիւն ե տալիս լծվելու իր յերկրի տնտեսական զարգացման գործին: Ամենաեականն այդ ուղղութեամբ՝ «գյուղացու դրութիւնը միանգամից բարելավելն ե»: Խնչպես կարելի յեր բարելավել գյուղացու դրութիւնը: Չէ՞ վոր նա միայն ֆիզիքապես չեր տանջված. ամբողջ գյուղական տնտեսութիւնն եր ավերված ու քայքայված: «Ջրանցքներ, — ահա Հայաստանի փրկութիւնը կործանումից» — ասում ե ընկ. Լենինը: Վոչ թիւրքիայի հետ անվերջ պատերազմներ, վոչ

անխնա կոտորածներ, այլ միայն դաշտերի վոռոգում, այն ել վոչ արյունով, այլ հասարակ ջրով: «Վոռոգումն ամենից կարեւորն ե, նա կվերաստեղծի յերկիր, կվերածննդան, վամրապնդի սոցիալիզմին անցնելը»: Յեվ այս նա կրկնում եր վոչ թե մեկ անգամ, վորովհետեւ գիտեր, վոր վոռոգելուց ե կախած յերկրի վերածնունդը: «Վոռոգումը և օսկապես սննդամթերք ե այն տնտեսից, վորպեսզի ինչ գնով ել վոր լինի՝ բարձրացվի գյուղացի տնտեսութեան և անասնապահութեան: Յեվ այս հանգամանքը նա հատկապես ընդգծում եր, վորպեսզի Հայաստանի կոմունիստներն իմանան, վոր իրենց հիմնական աշխատանքն այդ ե:

Հայաստանի գյուղատնտեսութեան հիմնական ճյուղերը դաշնակցութեան վարած քաղաքականութեան շնորհիվ չգոյութեան եր հասցրած: Դաշնակցականները 207.153 դես ցանքսերի տարածութիւնն իջեցրել և հասցրել եյին 60.719 դես: Չկար և վոչ մի դեսյատին բամբակի ցանքս: Այս բոլորին պետք եր իրազեկ լինել, վորպեսզի դաշտերի վոռոգումն առաջարկվեր: Ավելի վատ վիճակում եր գտնվում անասնապահութիւնը: Անվերջ պատերազմները և դրա հետ միասին նաև անվերջ զորակոչերը՝ յերկրում միանգամայն վոչնչացրել եյին անասնապահութիւնը: Ընկ. Լենինը գիտեր, վոր անասնապահութիւնը

գյուղատնտեսութեան հիմնական ճյուղերից մեկն է հանդիսանում և այս ասպարիզում պիտի լարել բոլոր ուժերը:

Սակայն բամբակագործութեան և անասնապահութեան զարգացումը հարակցված է վստահման, ջրանցքների կառուցման և ճահիճների ցամաքեցման հետ:

Յեւ չայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը Վլադիմիր Իլիչի՝ Վոռոգովան առթիւ տված պատգամն իրականացնում է: Տարեց—տարի չայաստանը տոնում է մի նոր ջրանցքի բացում և յուրաքանչյուր տարի ավելի ու ավելի ջրանցքների պահանջ դնում:

Զարգանում է «հողագործութիւնն ու անասնապահութիւնն» և նրա հետ միասին զարգանում է նաև նորանոր ջրանցքների կառուցման պահանջը: Սակայն գյուղատնտեսութեան զարգացումը պահանջում է և տնտեսութեան նոր ձևերի կիրարկում, — նոր մեքենաների մուծում ու գործադրութիւն, պահանջում է գյուղատնտեսութեան արտադրութեան բարձրացում: Խորհրդային չայաստանի գյուղը հետամնաց է. նա ցարական կառավարութեան որոք ունեւ միայն յերկու հողաչափ, իսկ 1914 թ.՝ յերեք, նույն թվով նաև գյուղատնտեսներ, ու դրա համար ել տարրորինակ չէ, վոր այստեղ, մի քանի շրջաններում, հողագործութիւնը տարվում է նախնա-

կան միջոցներով, գյուղացիների իրենց իսկ ստեղծած գործիքներով, — առանց մեքենաների: Ընկ. ԼԵՆԻՆԵ առաջարկում է յերկիրը մեքենաներ մուծել և ձեռնարկել գյուղի ելեկտրոֆիկացիային: Անհրաժեշտ է «Ելեկտրոֆիկացիայի նկատմամբ խոշոր աշխատանքներ ըսկսել» — հանձնարարում է ընկ. ԼԵՆԻՆԸ:

Խաղաղութիւն, — Վոռոգով — Ելեկտրոֆիկացիա, — ահա ընկ. ԼԵՆԻՆԻ հրահանգները: չայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը գնացել է իր Ուսուցչի ցույց տված ուղիներով. Խաղաղութիւնն նա հասել է, ջրանցքներ կառուցել և կառուցում է, Ելեկտրոֆիկացիան ըսկսված է: Յեւ չայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնն իր հետագա աշխատանքների ընթացքում ել ղեկավարվելու յե ընկ. ԼԵՆԻՆԻ անմիջական հրահանգներով ու նրա ուսմունքով:

ԼԵՆԻՆԻ ՆԱՄԱԿԸ ԱԴԸՐ-
ԲԵԶԱՆԻ, ՀԱՅՍՍՏԱՆԻ, ԴԱ-
ՂՍՏԱՆԻ ՅԵՎ ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԸՆԿ. ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻՆ

ԼԵՆԻՆԻ ՆԱՄԱԿԸ

ԱԴԻԲԻԶԱՐԻ ԶՍՅԱՍՏԱՐԻ, ԴԱՂԱՏԱՐԻ ՅԵՎ
ԼԵՌՆԱԿԱՆԵՐԻ ԸՆԿ. ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐՆ

Ձերմ վողջունում եմ Կովկասի խորհրդային Հանրապետություններին և թույլ եմ տալիս ինձ հուսալու, վոր նրանց սերտ միությունը Կասեղծի ազգային համերաշխության մի այնպիսի որինակ, վորպիսին տեսնված չեր և չեր ել կարող լինել բուրժուական հասարակարգում:

Սակայն վորքան ել կարևոր չլինի ազգային համերաշխությունը Կովկասյան ազգերի բանվորների ու գյուղացիների մեջ, բայց անհամեմատ կարևոր ե պահպանել և զարգացնել խորհրդային Իշխանությունը, վորպես փոխանցում դեպի սօցիալիզմ:

Խնդիրը դժվարին ե, բայց միանգամայն լուծելի: Նրա հաջող լուծման համար ամենից կարևորն ե այն, վոր Անդրկովկասի կոմունիստները հասկանային իրենց ուրույն դրությունը, իրենց հանրապետությունների դրության ու պայմանների տարբերությունը խորհրդային Ռուսաստանից, վոր նրանք հասկանային մեր տակալիկան չընդորինակելու անհրաժեշտությունը, այլ խոհուն կերպով փոփոխությունների

յենթարկելու այն տեղական կոնկրետ պայմանների տարբերության համեմատ:

Ռուսաստանում խորհրդային հանրապետությունները քաղաքական և ռազմական ոգնություն չի ստացել և վոչ մի տեղից: Ընդհակառակն նա տարիներ ու տարիներ մաքառել ե Անտանտայի բոլոր ռազմական արշավանքների և բլոգադայի դեմ:

Կովկասի խորհրդային հանրապետությունները քաղաքական և փոքր չափով ռազմական ոգնություն ստացել են խորհրդային Ռուսաստանից: Դա հիմնական տարբերությունն ե:

Յերկրորդ՝ ներկայումս ալլեա վախ չգիտի լինի, վոր Անտանտան ռազմական արշավանք կը ձեռնարկի և գինված ոժանդակություն ցույց կտա Վրաց, Հայոց, Ադրբեջանի, Դաղստանի և Լեռնականների ապրտակ զվարդիականներին:

Անտանտան «զազվեց» Ռուսաստանում և այդ հանգամանքը նրան կհարկադրի հավանորեն վորոշ ժամանակ ավելի զգուշ լինել:

Յերրորդ՝ Կովկասի խորհրդային կոմունիստները ել առավել գյուղացիական խորհուրդներ ունենան Ռուսաստանը:

Չորրորդ Ռուսաստանը իրեն իրեն հարգում և ված եր և զգալի չափով համարում իրեն իրեն ապրտալիստական առաջավոր յերկրներից:

Կովկասը դյուրին և արագ կերպով կարող

ե ստեղծել «համակեցություն» և ապրանքների փոխանակում կապիտալիստական արևմուտքի հետ:

Տարբերությունը միայն դա չի: Բայց և մասնանշված տարբերությունը բավական է, վորպեսզի հասկանալի լինի այլ տակտիկայի անհրաժեշտությունը:

Ավելի մեղմ, զգույշ և զիջող վերաբերմունք ունենալ գեպի մանր բուրժուազիան, ինտելիգենցիան և հատկապես գեպի գյուղացիությունը: Ամեն կերպ աշխատել ուժեղ և շուտափուլյա տնտեսական նեցուկ ձեռք բերել կապիտալիստական Սրևմուտքում՝ վարելով նրա հետ կնքաստիաներ և ապրանքների փոխանակման քաղաքականություն:

Նավթ, մարգանց, քարածուխ, (Տեղիբուլի հանքերը), սլիվնձ—ահա Անդրկովկասի լեռնային ծով հարստությունների տակավին թերի թվումն, վորոնք կատարյալ հնարավորություն են ապիտարատասանների կոնցեսսիաների և ապրանքների փոխանակության քաղաքականությունը մեծ ծավալով զարգացնելու:

Պետք է այդ անել լայն չափով, հաստատուն կերպով, հատությամբ շրջահայաց, ամեն կերպ աշխատել այդ ոգտագործել բանվորների ու գյուղացիների կացության բարվոքման համար: Ոգտագործել տնտեսական շինարարության հա-

մար Խտալիայի, Ամերկայի և ուրիշ յերկրները հետ կատարած ապրանքների փոխանակումը, հարուստ յերկրների արտագրական ուժեքը, սպիտակ ածուխը (Նրի ույժը), վոռոգումը: Վոռոգումը առանձնապես կարևոր է այն բանի համար, վոր հողագործությունն ու անասնապահությունը զրվի պատշաճ բարձրության վրա ինչ գնով ել լինի:

Ավելի դանդաղ, զգույշ, ավելի սխտեմատիկ անցումն գեպի սոցիալիզմը—ահա թե ինչ է հնարավոր ու անհրաժեշտ կովկասի հանրապետություններին ի տարբերություն Սորերգային Ռուստտանից: Ահա թե ինչ է հարկավոր ըմբռնել և կարողանալ իրագործել ի տարբերություն մեր տակտիկայից:

Մենք աշխատում եյինք առաջին ճեղքվածքն առաջացնել համաշխարհային կապիտալիզմի մեջ, ձեղքվածքն առաջացրած է: Մենք մեզ պաշտպանեցինք կստադի, գերբնական, ծանր ու զրգվարին, տանջալից համառ պատերազմում ընդդեմ սպիտակների, եսերների, մենշևիկների, վորոնք ոգնություն եյին ստանում ամբողջ Անտանտայից, նրա բոկաղից, նրա ռազմական ույժից:

Ձեզ, կովկասի ընկ կոմունիստներ, հարկ չկա ճեղքվածք առաջացնելու:

Պետք է կարողանալ մեծ զգուշությամբ և սխտեմատիքորեն ստեղծել նորը, ոգտագործելուն ձեզ համար ոգտավետ 1921 թվի միջազգային հանգամանքները: Թե Յեվրոպան, թե ամբողջ

աշխարհը 1921 թվի արդեն այն չեն, ինչ վոր
1918 թվականին էին:

Չընդորինակել մեր տակտիկան, ալ զնտել
նրա ուրույն լինելու պատճառները, նրա հան-
դամանքներն և հետեանքները, կիրառել Ձեզ
մոտ 1917—21 թ. թ. վոչ տառը, այլ նրա վո-
զին, իմաստը: Տնտեսապես միանգամայն հեն-
վել ապրանքների փոխանակության վրա կապի-
տալիստական արտառահմանի հետ. այս դործում
ժլատ չպիտի լինել, թող տասնյակ միլիոն թանկ-
արժեք լեռնային նյութեր անցնեն նրան:

Միանգամայն պետք է ձգտել, վոր գյուղա-
ցիների դրությունը բարվոքվի և սկսել ելեք-
տրականացման ու վոռոգման խոշոր աշխատանք-
ներ: Ամենից կարևորը վոռոգման գործն է, նա
ամենից շուտ կվերաստեղծի յերկիրը, կվերածնի
նրան, անգարձ կթաղի անցյալը և կամրացնի
անցումն դեպի սոցիալիզմ:

Ներդրություն եմ խնդրում այս նամակի
անփութության համար, վորը յես շտապ գրեցի,
վորպեսզի ընկ. Մյասնիկյանի միջոցով ուղար-
կեմ: Նորից ջերմազին վողջույններ ու ցան-
կություններ եմ ուղարկում Կովկասի Խոր-
հորդանոցային տնտեսությունների բանվորներին:

ԼԵՆԻՆ



<< Ազգային գրադարան



NL0178197

ԳԻՆՆ Ե 10 ԿՈՊ.